



STANINGU

*Տեխնոլոգիա  
Թեմատիկ պլանավորում  
4-րդ դասարան,  
Շաբաթական 1 դասաժամ  
Տարեկան 34 ժամ  
Դասվար՝ Ֆ. Միսակյան*

| Հ/Հ                           | Էջ   | ԱՇԽԱՏԱՆՔ ԹՂԹՈՎ ԵՎ ՍՏՎԱՐԱԹՂԹՈՎ                          | 8 Ժամ |
|-------------------------------|--|--|-------|
| <b>Նպատակը</b>                | <ul style="list-style-type: none"> <li>Սովորողներին ծանոթացնել առարկայի պահանջներին:</li> <li>Նպաստել սեփական մտահղացմամբ, նախաձեռնությամբ, ստեղծագործել և ինքնուրույն ստեղծել ինչ-որ բան:</li> <li>Հասկացողություն մոդելի և մոդելավորման մասին:</li> <li>Իմանա մոդելի պատմությունը և նրա դերը տեխնիկական ստեղծագործության մեջ:</li> <li>Վեր հանել միջառարկայական կապերը:</li> <li>Ակտիվացնել սովորողների համագործակցային կարողությունները:</li> <li>Զարգացնել վերլուծելու, եզրահանգումներ կատարելու, համադրելու կարողություններ:</li> <li>Ձևավորել և խորացնել գիտելիքներ աշխատանքի պլանավորման, կազմակերպման, ինչպես նաև անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման բնագավառում:</li> <li>ԿԱՊԿՈւ աշակերտներին ցուցաբերել անհատական մոտեցում և առաջադրանքներ տալ ըստ նախատեսված ԱՈւՊ-ի:</li> </ul> |  |       |
| <b>Վերջնական արդյունքները</b> | <ul style="list-style-type: none"> <li>Կարողանա կատարել մոդելների դասակարգում:</li> <li>Կարողանա մոդելավորել թռչող և լողացող մարմիններ:</li> <li>Պատրաստի թղթից և սովարաթղթից ավտոմեքենայի, թռչող և լողացող մոդելներ:</li> <li>Կարողանա վերլուծել, սեփական կարծիք հայտնել:</li> <li>Պարզաբանի մոդելի կառուցվածքը,</li> <li>Որոշի պատրաստման հաջորդականությունը :</li> <li>Կատարի նյութի ընտրություն:</li> <li>Կարողանա կատարել մոդելի հավաքում:</li> <li>Կարողանա պլանավորել աշխատանք:</li> <li>Կարողանա մոդելը ձևավորել գունավոր թղթով, մատիտներով, ջրաներկով և այլն:</li> <li>Իմանա և պահպանի սանիտարահիգիենիկ պահանջները:</li> <li>Կարողանա պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները:</li> </ul>  |  |       |
| Հ/Հ                           | Էջ   | Դասաժամի թեմայի անվանում                               | Ժամ   |
| 1.                            | 4-5  | <a href="#">Դաս 1 Ռմբակոծիչ</a>                        | 1     |
| 2.                            | 6-7  | <a href="#">Դաս 2 Ինքնաթիռ</a>                         | 1     |
| 3.                            | 8-12   | <a href="#">Դաս 3 Գործնական Աշխատանք Ինքնաթիռ</a>      | 1     |
| 4.                            | 13   | <a href="#">Դաս 4 Պտտիկ</a>                            | 1     |
| 5.                            | 14-15  | <a href="#">Դաս 5 Ավտոմեքենա: Սպորտային ավտոմեքենա</a> | 1     |
| 6.                            | 16   | <a href="#">Դաս 6 Բեռնատար</a>                         | 1     |
| 7.                            | 17-18  | <a href="#">Դաս 7 Առազաստանավ</a>                      | 1     |
| 8.                            | 19-21  | <a href="#">Դաս 8 Շոգենավ: Նավակ գրչաման</a>           | 1     |

| Հ/Հ                           | Էջ    | ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԱՐՐԵՐ (6 ժամ)  | Ժամ |
|-------------------------------|-------|---|-----|
| <b>Նպատակը</b>                |       | <ul style="list-style-type: none"> <li>• Ունենա տեղեկություններ և ընդհանուր պատկերացում փոխադրիչ մեքենաների, դրանց տեսակների և տնտեսության մեջ դրանց կիրառման մասին:</li> <li>• Ունենա գիտելիքներ տեխնոլոգիական մեքենաների վերաբերյալ, դրանց տեսակները և կիրառությունը տնտեսության մեջ:</li> <li>• Իմանա կարի մեքենայի, խառատային և գայլիկոնիչ հաստոցների աշխատանքի սկզբունքը:</li> <li>• Իմանա պլանավորել պարզ մակետների և մոդելների հավաքման աշխատանքները:</li> <li>• Վեր հանել միջառարկայական կապերը:</li> <li>• Ակտիվացնել սովորողների համագործակցային կարողությունները:</li> <li>• Ձևավորել և խորացնել գիտելիքներ աշխատանքի պլանավորման, կազմակերպման, ինչպես նաև անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման բնագավառում:</li> <li>• ԿԱՊԿՈւ աշակերտներին ցուցաբերել անհատական մոտեցում և առաջադրանքներ տալ ըստ նախատեսված ԱՈւՊ-ի:</li> <li>• (Ձևավորել նախնական գիտելիքներ ձեռնարկատիրական կրթության վերաբերյալ:)</li> </ul> |     |
| <b>Վերջնական արդյունքները</b> |       | <ul style="list-style-type: none"> <li>• Կարողանա կատարել մոդելների դասակարգում:</li> <li>• Կարողանա հետազոտել և մեկնաբանել համեմատաբար բարդ մակետների ու մոդելների կառուցվածք:</li> <li>• Պարզաբանի մոդելի կառուցվածքը:</li> <li>• Որոշի պատրաստման հաջորդականությունն ու պլանավորել աշխատանք:</li> <li>• Կարողանա համեմատել տարբեր մակետների և մոդելների կոնստրուկցիան:</li> <li>• Կարողանա տեխնիկական սարքերը հավաքել:</li> <li>• Կարողանա ստեղծել պարզ մակետների և մոդելների կոնստրուկցիաներ:</li> <li>• Կազմել մոդելի կամ մակետի հավաքման երթուղային քարտը:</li> <li>• Պահպանի սանիտարահիգիենիկ պահանջներ:</li> <li>• Կարողանա վեր հանել թեմաներում առկա միջառարկայական կապերը:</li> <li>• Կարողանա աշխատանքի անվտանգության կանոնները պահպանել:</li> </ul>   |     |
| 9.                            | 24    | <a href="#">Դաս 9 Տեխնիկայի տարրեր</a>  |     |
| 10.                           | 25    | <a href="#">Դաս 10 Փոխադրիչ մեքենա</a>  | 1   |
| 11.                           | 26-27 | <a href="#">Դաս 11 Տեխնոլոգիական մեքենաներ: Փայտամշակման, գայլիկոնային, խառատային հաստոցներ:</a>  | 1   |
| 12.                           | -     | <a href="#">Դաս 12 Աշխատանք կոնստրուկտորով:</a>   | 1   |
| 13.                           | -     | <a href="#">Դաս 13 Աշխատանք կոնստրուկտորով:</a>   | 1   |
| 14.                           | -     | <a href="#">Դաս 14 Աշխատանք կոնստրուկտորով:</a>   | 1   |

| Հ/Հ                           | Էջ        | ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԱԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ (5 ժամ)  | Ժամ        |
|-------------------------------|-----------|--|------------|
| <b>Նպատակը</b>                |           | <ul style="list-style-type: none"> <li>Գիտենա թելերի և գործվածքների տեսակները և նշանակությունը:</li> <li>Գիտենա կարելու և ասեղնագործելու համար նախատեսված թելերի տեսակները:</li> <li>Հասկացողություն մոդելի և մոդելավորման մասին:</li> <li>Ակտիվացնել սովորողների համագործակցային կարողությունները:</li> <li>Զարգացնել վերլուծելու, եզրահանգումներ կատարելու, համադրելու կարողությունները:</li> <li>Գիտենա գործվածքի խնայողաբար օգտագործման ձևերը:</li> <li>Ձևավորել և խորացնել աշխատանքի պլանավորման, կազմակերպման, ինչպես նաև անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման բնագավառում գիտելիքները:</li> <li>ԿԱՊԿՈւ աշակերտներին ցուցաբերել անհատական մոտեցում և առաջադրանքներ տալ ըստ նախատեսված ԱՈւՊ-ի:</li> </ul>   |            |
| <b>Վերջնական արդյունքները</b> |           | <ul style="list-style-type: none"> <li>Գործիքներով՝ ասեղ, մկրատ, մատնոց , անվտանգ աշխատելու կանոնները:</li> <li>Կարողանա կատարել մոդելների դասակարգում:</li> <li>Կարողանա վերլուծել, սեփական կարծիք հայտնել:</li> <li>Կարողանա որոշել թելի երկարությունը:</li> <li>Կարողանա գործվածքը խնայողաբար օգտագործել:</li> <li>Կարողանա տարբերել գործվածքի շիտակ և թարս երեսները:</li> <li>Կարողանա տարբերել միացնել թելերով, սոսնձով, գործվածքի վրա կատարել չափանշում, ձևում:</li> <li>Որոշի պատրաստման հաջորդականությունը :</li> <li>Կարողանա կատարել մոդելի հավաքում:</li> <li>Կարողանա պլանավորել աշխատանք</li> <li>Կարողանա կարվածքը ձևավորել ըստ նմուշի՝ անհրաժեշտության դեպքում կատարելով փոփոխություններ:</li> <li>Վեր հանել միջառարկայական կապերը</li> <li>Իմանա և պահպանի սանիտարահիգիենիկ պահանջները:</li> </ul> <p>Կարողանա աշխատանքի անվտանգության կանոնները պահպանել:</p> |            |
| 15.                           | 28-31     | <a href="#">Աշխատանք մանածագործական նյութերով</a>  | 1          |
| 16.                           | 32-39     | <a href="#">Մատնային և ձեռնոցային տիկնիկներ</a>  | 1          |
| 17.                           | 40-42     | <a href="#">Խոհանոցային պարագաներ Գործնական աշխատանք</a>   | 1          |
| 18.                           | 43-44     | <a href="#">Էջանշան բուլ</a>   | 1          |
| 19.                           | 45        | <a href="#">Տոնածառի խաղալիքներ</a>  | 1          |
| <b>Հ/Հ</b>                    | <b>Էջ</b> | <b>ԿԵՆՑԱՂ (5 ժամ)</b>  | <b>Ժամ</b> |

|                                      |   |   |            |
|--------------------------------------|---|---|------------|
| <p><b>Նպատակը</b></p>                | <ul style="list-style-type: none"> <li>• Գիտենա հագուստի և կոշիկների հիգիենայի կանոնները, դրանց նկատմամբ հոգատար վերաբերմունքի և խնամքի անհրաժեշտության մասին:</li> <li>• Գիտենա հագուստի նկատմամբ ընդհանուր և սեզոնային պահանջները:</li> <li>• Իմանա բնակարանին ներկայացվող սանիտարահիգիենիկ պահանջները:</li> <li>• Գիտենա վարքի կանոնները:</li> <li>• Պահպանել և լինել հոգատար բնության հանդեպ:</li> <li>• Գիտենա սեղանի պարզագույն սպասքավորում:</li> <li>• Վեր հանել միջառարկայական կապերը:</li> <li>• Սանիտարահիգիենիկ պայմանների ստեղծում և պահանջների կատարում:</li> <li>• Ակտիվացնել սովորողների համագործակցային կարողությունները:</li> <li>• ԿԱՊԿՈւ աշակերտներին ցուցաբերել անհատական մոտեցում և առաջադրանքներ տալ ըստ նախատեսված ԱՈւՊ-ի:</li> </ul>   |   |            |
| <p><b>Վերջնական արդյունքները</b></p> | <ul style="list-style-type: none"> <li>• Կարողանա մաքրել հագուստը և կոշիկները լվանալ որոշ անձնական իրեր:</li> <li>• Որոշի պատրաստման հաջորդականությունը :</li> <li>• Կարողանա ուժերի ներածին չափով մաքրել և կարգի բերել բնակարանը:</li> <li>• Կարողանա կատարել հագուստի ոչ բարդ վերանորոգում:</li> <li>• Կարողանա որոշել մրգերի և բանջարեղենների հասձ լինելը դրանց արտաքին տեսքով և համով:</li> <li>• Կարողանա պլանավորել աշխատանք:</li> <li>• Կարողանա պատրաստել բուտերբրոդներ:</li> <li>• Կարողանա պատրաստել ոչ բարդ ջերմային մշակում պահանջող կերակրատեսակներ:</li> <li>• Կարողանա պատրաստել ջերմային մշակում չպահանջող պարզագույն կերակրատեսակներ:</li> <li>• Իմանա և պահպանի սանիտարահիգիենիկ պահանջները և անվտանգության կանոնները:</li> </ul> <p>Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:</p> |   |            |
| <p>20.</p>                           | <p>46-47</p>  | <p><a href="#">Բնակարանի և աշխատանքային սենյակի ինտերիերի մասին</a></p>     | <p>1</p>   |
| <p>21.</p>                           | <p>48</p>   | <p><a href="#">Սանիտարահիգիենիկ պահանջները սննդի պատրաստման ժամանակ</a></p> | <p>1</p>   |
| <p>22.</p>                           | <p>48-51</p>  | <p><a href="#">Անվտանգության կանոններ</a></p>                               | <p>1</p>   |
| <p>23.</p>                           | <p>51-53</p>  | <p><a href="#">Կերակրատեսակներ ձվից: Եփած ձու: Չվածեղի պատրաստում</a></p>   | <p>1</p>   |
| <p>24.</p>                           | <p>54</p>   | <p><a href="#">Եփած կարտոֆիլ</a></p>  | <p>1</p>   |
| <p>Հ/Հ</p>                           | <p>ԷԶ</p>   | <p><b>ՆԱԽԱԳԻԾ (4 ժամ)</b></p>   | <p>Ժամ</p> |

|                                      |  |  |                   |
|--------------------------------------|--|--|-------------------|
| <p><b>Նպատակը</b></p>                | <ul style="list-style-type: none"> <li>• Իմանա որն է նախագիծը և նրա բաղադրիչները (շինվածքներ):</li> <li>• Թեմայի որոշում, ինֆորմացիայի հավաքարար ուսումնասիրությունները:</li> <li>• Շինվածքի պատրաստման պլանավորում և պատրաստում:</li> <li>• Շինվածքի փորձարկում և գնահատում:</li> <li>• Նպաստել սեփական մտահղացմամբ, նախաձեռնությամբ, ստեղծագործել և ինքնուրույն ստեղծել ինչ-որ բան:</li> <li>• Վեր հանել միջառարկայական կապերը:</li> <li>• Ակտիվացնել սովորողների համագործակցային կարողությունները:</li> <li>• Զարգացնել վերլուծելու, եզրահանգումներ կատարելու, համադրելու կարողություններ:</li> <li>• Ձևավորել և խորացնել գիտելիքներ աշխատանքի պլանավորման, կազմակերպման, ինչպես նաև անվտանգության և սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման բնագավառում:</li> <li>• ԿԱՊԿՈւ աշակերտներին ցուցաբերել անհատական մոտեցում և առաջադրանքներ տալ ըստ նախատեսված ԱՈւՊ-ի:</li> </ul> |  |                   |
| <p><b>Վերջնական արդյունքները</b></p> | <ul style="list-style-type: none"> <li>• Կարողանա ընտրել մոդել և կատարել մոդելների դասակարգում:</li> <li>• Նաժազծել կահույք և մանկական խաղահրապարակ :</li> <li>• Կարողանա վերլուծել, սեփական կարծիք հայտնել:</li> <li>• Պարզաբանի մոդելի կառուցվածքը,</li> <li>• Որոշի պատրաստման հաջորդականությունը :</li> <li>• Կատարի նյութի ընտրություն:</li> <li>• Կարողանա կատարել մոդելի հավաքում:</li> <li>• Կարողանա պլանավորել աշխատանք:</li> <li>• Իմանա և պահպանի սանիտարահիգիենիկ պահանջները:</li> <li>• Կարողանա աշխատանքի անվտանգության կանոնները պահպանել:</li> </ul> <p>Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը</p>   |  |                   |
| <p>25.</p>                           | <p>55</p>  | <p><a href="#">Նախագծային հիմունքներ</a></p>               | <p>1</p>          |
| <p>26.</p>                           | <p>57</p>  | <p><a href="#">Նախագիծ: Բնակարանի ներքին հարդարում</a></p> | <p>1</p>          |
| <p>27.</p>                           | <p>57-60</p>   | <p><a href="#">Նախագիծ: Կահույք</a></p>                    | <p>1</p>          |
| <p>28.</p>                           | <p>61</p>  | <p><a href="#">Մանկական խաղահրապարակ</a></p>               | <p>1</p>          |
| <p>Հ/Հ</p>                           | <p>ԷԶ</p>  | <p><b>Ձեռնարկատիրական կրթություն (6 ժամ)</b></p>           | <p><b>Ժամ</b></p> |
| <p><b>Նպատակ</b></p>                 | <ul style="list-style-type: none"> <li>• Ձևավորել մարդկանց ցանկություններն ու կարիքները, սակավության խնդիրը բացատրելու կարողություն:</li> <li>• Ձևավորել բիզնես գաղափարներ ստեղծելու և ներկայացնելու կարողություն:</li> <li>• Ձեռներեցությունը գործարարությունից տարբերելու կարողությունների ձևավորում:</li> </ul>   |  |                   |

|                        |   |  |   |
|------------------------|---|--|---|
|                        | <ul style="list-style-type: none"> <li>• Հասկանա, որ պլանը կազմել նշանակում է՝ որոշել, թե կատարվող աշխատանքը ինչ քայլերից պետք է բաղկացած լինի և այդ քայլերը ինչպես են հաջորդում միմյանց:</li> <li>• Իմանա ովքեր են արտադրողները, վաճառողները և սպառողները: Ինչ է շուկան:</li> <li>• Իմանա էթիկական նորմերի կարևորությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ:</li> <li>• Իմանա ապրանքի/ ծառայության և հասարակական ապրանքի/ ծառայության միջև եղած տարբերությունը</li> <li>• Իմանա որոնք են էթիկայի նորմերը</li> <li>• Գիտակցի, որ նոր և լավ գաղափարը մարդու համար կարող է եկամտի աղբյուր դառնալ</li> <li>• ԿԱՊԿՈւ աշակերտներին ցուցաբերել անհատական մոտեցում և առաջադրանքներ տալ ըստ նախատեսված ԱՈւՊ-ի:</li> </ul>  |  |   |
| Վերջնար-<br>դյունքները | <ul style="list-style-type: none"> <li>• Բիզնես պլանի նշանակությունը բացատրելու կարողություն</li> <li>• Պարզ բիզնես պլան կազմելու և հաշվարկներ կատարելու կարողություն</li> <li>• Նորարարական բիզնես գաղափարները գնահատելու և արժևորելու կարողություն</li> <li>• Կարողանա բացատրել՝ ինչպես են ստեղծվում ձեռնարկությունները և կազմակերպվում արտադրությունը</li> <li>• Առաջարկը և պահանջարկը բացատրելու կարողություն</li> <li>• Շուկայական հետազոտություն կատարելու կարողություն</li> <li>• Կարողանա բացատրել՝ ինչպես են ձեռներեցները մարդկանց տրամադրում այն ապրանքները և ծառայությունները, որոնք նրանց անհրաժեշտ են</li> <li>• Կարողանա բացատրել՝ ինչպես են ստեղծվում ձեռնարկությունները</li> <li>• Կարողանա բացատրել՝ ինչպես է կազմակերպվում արտադրությունը</li> <li>• Կարողանա բացատրել՝ ինչ է աշխատանքային էթիկան:</li> </ul> <p>Վեր հանել միջառարկայական կապերը թեմայում</p> |  |   |
| 29.                    | -   | <a href="#">Ցանկություններ, կարիքներ. Սակավություն</a>                     | 1 |
| 30.                    | -   | <a href="#">Բիզնես գաղափար: Բիզնես գաղափարի ձևակերպում և իրականացում :</a> | 1 |
| 31.                    | -   | <a href="#">Արտադրական գործոններ</a>                                       | 1 |
| 32.                    | -   | <a href="#">Բիզնես պլան Գործնական Աշխատանք</a>                             | 1 |
| 33.                    | -   | <a href="#">Շուկա. Արտադրողներ, վաճառողներ և սպառողներ</a>                 | 1 |
| 34.                    | -   | <a href="#">Բիզնես էթիկա</a>   | 1 |

[սլան](#)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

- *Ի՞նչ նյութեր են անհրաժեշտ ռմբակոծիչ պատրաստելու համար:*
- *Ինչպե՞ս ծալել ստացված քառակուսին:*
- *Ինչպե՞ս ենք ծալում ստացված ուղղանկյան եզրերը:*
- *Նշել անվտանգության կանոնները աշխատելիս:*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- *Իմանա ռմբակոծիչ պատրաստելու համար անհրաժեշտ է թուղթ, մատիտ, քանոն, մկրատ:*
- *Իմանա ինչպես ստացված քառակուսին ծալել երկտակ:*
- *Ուղղանկյան եզրերը ծալելով ստանալ եռանկյունի:*
- *Իմանա աշխատանքի ժամանակ անվտանգության կանոնների մասին:*

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- *A4 ձևաչափի թուղթը ծալել երկտակ և օգտվել նկարից:*
- *Գծել թռչող մոդելի գծագիրը:*
- *Մկրատով կտրել և եզրագծով բացել:*
- *Ծալադրել թուղթը:*
- *Կարողանա ձևավորել քթամասը, թևերը և պոչամասը:*
- *Աշխատելիս պահպանի անվտանգության կանոնները:*
- **Ինքնաթիռ**



**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ի՞նչ նյութեր և ինչպիսի՞ թուղթ է անհրաժեշտ ինքնաթիռներ պատրաստելու համար:*
- *Նշել հաջորդ գործողությունը, երբ թուղթը ծալված է երկտակ:*
- *Ինչո՞վ ենք ամրացնում ինքնաթիռի քթամասը:*
- *Ինչ նյութով ենք ամրացնում ինքնաթիռի պոչամասը:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- *Ինքնաթիռ պատրաստելու համար անհրաժեշտ է ունենալ տետրի վանդակավոր թուղթ, ստվարաթուղթ, մատիտ, քանոն, մկրատ, դանակ, սոսինձ, ամրակ:*
- *Իմանա, որ վանդակավոր թուղթը երկտակ ծալելուց հետո պետք է օգտվել գրքից:*
- *Իմանա վանդակավոր թղթով պատրաստվող ինքնաթիռի քթամասը ամրացնում են ամրակով:*
- *Իմանա, որ ինքնաթիռի պոչամասը ամրացնում են սոսնձով:*
- *Իմանա անվտանգության կանոնները և սանիտարահիգիենիկ պահանջները:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Ընտրել և առանձնացնել պատրաստվող ինքնաթիռի մոդելը և անհրաժեշտ նյութերը:*
- *Պլանավորել կատարվելիք աշխատանքը:*
- *Կարողանա օգտվել գծագրից:*
- *Օգտվելով նկարից կարողանա կատարել չափանշում:*
- *Օգտվել նկարից և գծել թռչող մոդելի գծագիրը:*
- *Կարողանա քթամասը գծանշված տեղից ծալել երկու անգամ և ամրացնել ամրակով:*
- *Կարողանա ամրացնել ինքնաթիռի պոչամասը սոսնձով:*
- *Կարողանա պահպանել աշխատանքի անվտանգության կանոնները և սանիտարահիգիենիկ պահանջները:*
- *Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:*

## Ինքնաթիռ

[Թեմատիկ պլան](#)

### Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

- Առանձնացնել և նշել ինքնաթիռ պատրաստելու համար անհրաժեշտ նյութերն ու գործիքները:
- Ի՞նչ գույնով պետք է ներկել ինքնաթիռի թևերը:
- Նշել ինչպես ամրացնել պտուտակը տափօղակի կենտրոնում:

### Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Իմանա ինչ նյութեր են անհրաժեշտ ընտրած մոդելի ինքնաթիռ պատրաստելու համար (ամրակներ, պաղպաղակի փայտիկներ, գունավոր ստվարաթուղթ, քորոց, ջրաներկ կամ գուաշ, վրձին, մկրատ, դանակ, սոսինձ, լուցկու տուփ, գինու խցան):
- Իմանա, որ ինքնաթիռի թևերը ներկում են կապույտ գույնով:
- Իմանա, որ պտուտակը տափօղակի կենտրոնում ամրացնում են քորոցի միջոցով:

### Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Կարողանա առանձնացնել ընտարծ ինքնաթիռի մոդելի համար անհրաժեշտ նյութերը:
- Կարողանա պատրաստման հաջորդականությունը որոշել:
- Կարողանա ձևավորել մոդելը գունավոր թղթով, մատիտներով, ջրաներկով և այլն:
- Օգտվել գրքից:
- Պահպանել սանիտարահիգիենիկ պահանջներ և աշխատանքի անվտանգության կանոնները:
- Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- Պտտիկ պատրաստելու համար առանձնացնել և նշել անհրաժեշտ նյութերն ու գործիքները:
- Պտտիկ պատրաստելու համար արդյո՞ք պետք է հավասար լինեն գունավոր թղթի կամ ստվարաթղթի կողմերը:
- Ի՞նչ գործողություն ենք կատարում անկյունագծերը գծելուց հետո:
- Կտրելուց հետո ի՞նչ գործողություն ենք կատարում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- Իմանա ինչ նյութեր են անհրաժեշտ պտտիկ պատրաստելու համար:
- Պտտիկ պատրաստելու համար անհրաժեշտ է, որ թուղթը կտրված լինի քառակուսի:
- Իմանա, որ անկյունագծերը գծելուց հետո պետք է այն կտրել մկրատով:
- Իմանա, որ կտրելուց հետո եզրերը ամրացվում են փայտե ձողին քորոցի միջոցով:
- Իմանա սանիտարահիգիենիկ պահանջների և աշխատանքի անվտանգության կանոնների մասին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- Կարողանա որոշել պատրաստման հաջորդականությունը:
- Կարողանա առանձնացնել անհրաժեշտ գործիքները՝ գունավոր թուղթ կամ ստվարաթուղթ, փայտե ձող, մատիտ, մկրատ, քորոց:
- Կարողանա կտրել քառակուսի:
- Կարողանա անկյունագծերը գծելուց հետո մկրատով կտրել չհասնելով կենտրոնին:
- Օգտվել գրքից:
- Պահպանել սանիտարահիգիենիկ պահանջներ և աշխատանքի անվտանգության կանոնները:
- Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:

## Ավտոմեքենա

[Թեմատիկ պլան](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- Նշել ավտոմեքենա պատրաստելու գործընթացի քայլաշարը:
- Ի՞նչ նյութեր է անհրաժեշտ ավտոմեքենա պատրաստելու համար:
- Թվարկել լուցկու տուփով պատրաստվող ավտոմեքենաների մոդելների տեսակներ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- Իմանա ինչպես պլանավորել կատարվող աշխատանքը:
- Իմանա ավտոմեքենա պատրաստելու համար անհրաժեշտ է լուցկու տուփ, մատիտ, քանոն, մկրատ և այլն:
- Իմանա ավտոմեքենաների տարբերությունը:
- Ծանոթ լինի ավտոմեքենաների տեսակներին:
- Իմանա սանիտարահիգիենիկ պահանջների և աշխատանքի անվտանգության կանոնների մասին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- Կարողանա ավտոմեքենա պատրաստելու գործընթացը պլանավորել:
- Կարողանա առանձնացնել ավտոմեքենա պատրաստելու համար անհրաժեշտ նյութերն ու գործիքները:
- Կարողանա անվանել և առանձնացնել 2-3 ավտոմեքենաների տեսակները, օրինակ՝ շոգեքարշ, ավտոկցորդ, սպորտային ավտոմեքենա:

- *Կարողանա պահպանել սանիտարահիգիենիկ պահանջներ և աշխատանքի անվտանգության կանոնները:*
- *Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:*

## **Բեռնատար**

[Թեմատիկ պլան](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ի՞նչ նյութեր են պետք բեռնատար ավտոմեքենա պատրաստելու համար:*
- *Ինչի՞ համար է անհրաժեշտ փայտե ձողը:*
- *Ինչպե՞ս պետք է կատարել աշխատանքը:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- *Իմանա, որ բեռնատար պատրաստելու համար անհրաժեշտ նյութերն են ստվարաթուղթը, թուղթը, փայտե ձողը:*
- *Իմանա դետալները ինչպես առանձնացնել ըստ նշանակության:*
- *Իմանա, որ աշխատելիս պետ է լինել կոկիկ և ուշադիր:*
- *Իմանա սանիտարահիգիենիկ պահանջների և աշխատանքի անվտանգության կանոնների մասին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Կարողա ճիշտ ընտրել նյութեր բեռնատար պատրաստելու համար:*
- *Կարողո՞ւնա կազմակերպել աշատանքային գործընթացը:*

- *Գարողանա պատրաստել և առանձնացնել պատրաստված դետալներն ըստ նշանակության:*
- *Գարողանա պահպանել սանիտարահիգիենիկ պահանջներ և աշխատանքի անվտանգության կանոնները:*
- *Գարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:*

## Առազաստանավ

[Թեմատիկ պլան](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- Նշել առազաստանավ պատրաստելու աշխատանքի ընթացքը:
- Թվարկել առազաստանավ պատրաստելու համար անհրաժեշտ նյութերը և պարագաները:
- Որտե՞ղ պետք է ամրացնել առազաստը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- Իմանա առազաստանավ պատրաստելու քայլաշարերը:
- Իմանա, որ առազաստանավ պատրաստելու համար անհրաժեշտ են 3 փայտե սեղմակ (լվացքասեղմակ), պաղպաղակի 5 փայտիկներ, սպիտակ և կապույտ ներկեր, սպիտակ և կապույտ թուղթ, ժապավեն, մատիտ, վրձին, սոսինձ, քանոն, մկրատ:
- Տիրապետի գրքից օգտվելու հմտությունների:
- Իմանա սանիտարահիգիենիկ պահանջների և աշխատանքի անվտանգության կանոնների մասին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- Նախօրոք պլանավորել կատարվող աշխատանքը:
- Կարողանա ընտրել և առանձնացնել առազաստավ պատրաստելու համար անհրաժեշտ իրեր և գործիքներ:
- Կարողանա մոդելի կառուցվածքը պարզաբանել և որոշել պատրաստման հաջորդականությունը:

- *Կարողանա օգտվել գրքից:*
- *Կարողանա մոդելի առանձին դետալները պատրաստել և մոդելը հավաքել:*
- *Կարողանա պահպանել սանիտարահիգիենիկ պահանջներ և աշխատանքի անվտանգության կանոնները:*
- *Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:*



## Շոգենավ: Նավակ գրչաման

[Թեմատիկ պլան](#)

### Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար

- Առանձնացնել շոգենավ և գրչատուփ պատրաստելու համար նյութեր ու գործիքներ:
- Ո՞ր թղթի վրա պետք է գծվի շոգենավի հիմքը:
- Նշել անվտանգության կանոնները աշխատելիս:

### Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

- Իմանա, որ շոգենավ պատրաստելու համար անհրաժեշտ է սովարաթուղթ, գունավոր թուղթեր, 2 հատ լուցկու տուփ, ժապավեն, մկրատ, սոսինձ, տարբեր չափսերի տուփեր:
- Իմանա, որ շագենավի հիմքը գծում են սովարաթղթի վրա:
- Իմանա սանիտարահիգիենիկ պահանջների և աշխատանքի անվտանգության կանոնների մասին:

### Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա

- Պատրաստման համար կարողանա ընտրել անհրաժեշտ նյութեր և գործիքներ:
- Կարողանա սովարաթղթի վրա գծել և մկրատով կտրել շոգենավի հիմքը:
- Կարողանա աշխատել կոկիկ և ուշադիր:
- Կարողանա հավաքել մոդելը:
- Կարողանա պահպանել սանիտարահիգիենիկ պահանջներ և աշխատանքի անվտանգության կանոնները:
- Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ի՞նչ է վերփոխել մարդը ժամանակի ընթացքում և ինչի՞ համար:*
- *Ի՞նչ է ներառում տեխնիկան իր մեջ:*
- *Գոյություն ունեցող ամենատարբեր տեխնոլոգիաներից նշել սննդի ոլորտի ժամանակակից տեխնոլոգիաները և դրանց նշանակությունը:*
- *Իմանա տեխնիկայի զարգացման պատմությունը*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- *Իմանա, որ նյութերը վերափոխելով մարդը ժամանակի ընթացքում ստեղծել է տարբեր գործիքներ, հարմարանքներ, սարքավորումներ, տեխնոլոգիական մեքենաներ:*
- *Գաղափար ունենա այն մասին, որ տեխնիկան ներառում է իր մեջ արտադրությունը, փոխադրությունը, տեղադրությունը, վերամշակումը, ընթացիկ հետևումը և նույնիսկ մնացորդների վերացումը անմնացորդ արտադրություն ապահովելու նպատակով:*
- *Տեղյակ լինի և իմանա, որ սննդի ոլորտի ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս մշակելու սննդի պատրաստման, պահպանման և փաթեթավորման նոր եղանակներ:*
- *Իմանա տարբեր ժամանակներում արված գյուտերի մասին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Կարողանա նշել և բերել օրինակներ տարբեր ժամանակներում ստեղծված և հայտնագործած սարքավորումների և գյուտերի մասին:*
- *Կարողանա նշել այն գործառույթները, որը տեխնիկան ներառում է իր մեջ և բերել օրինակներ:*
- *Օրինակների միջոցով կարողանա նշել և համեմատել սննդի ոլորտի ժամանակակից տեխնոլոգիաները օրինակների միջոցով:*
- *Կարողան նշել տեխնիկայի և տեխնոլոգիաների բնագավառների մի շարք կարևորագույն գյուտեր (օրինակ՝ 1290 թ.՝ մեխանիկական ժամացույց, 1712թ.՝ շոգեքարշ, 1826 թ.՝ լուսանկարչություն, 1839 թ.՝ ռոտակավոր հեծանիվ, 1876 թ.՝ հեռախոս, 1879 թ.՝ էլեկտրական լամպ, 1885 թ.՝ բենզինի շարժիչով աշխատող ավտոմեքենա, 1903 թ.՝ ինքնաթիռ, 1926 թ.՝ հեռուստատեսություն, 1946 թ.՝ էլեկտրոնային համակարգիչ, 1957 թ.՝ Երկրի արհեստական արբանյակ, 1971 թ.՝ գրպանի հաշվիչ (կալկուլյատոր) և այլն):*

- *Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:*

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ի՞նչ ենք հասկանում փոխադրիչ մեքենա սաելով:*
- *Նշել, թե ինչ է հոսքային գիծը, և ինչպես է այն ախատում:*
- *Նշել, թե ինչ է շարժասանդուղքը, և ինչ աշխատանք է այն իրականացնում:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- *Իմանա որոնք են փոխադրիչ մեքենաները և ինչ նշանակություն ունեն այդ մեքենաները մարդու կյանքում:*
- *Իմանա, որ հոսքային գիծը մշակող մեքենաների և աշխատատեղերի համախումբ է, որոնք դասավորված են դետալների պատրաստման ընթացքին համապատասխան:*
- *Իմանա որ, հոսքային գծի յուրաքանչյուր մեքենայի կամ աշխատատեղի համար նախատեսվում է մեկ կամ մի քանի գործողություն:*
- *Իմանա, որ հոսքային գիծը թևծակացնում է ախշատանքը:*
- *Իմանա, որ հոսքային գիծը նպաստում է մաքուր սննդամթերքի պատրաստմանը:*
- *Իմանա, որ շարժասանդուղքը օգնում է տեղաշարժվելուն:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Կարողանա առանձնացնել փոխադրիչ մեքենաները, օրինակների միջոցով ցույց տա այն գործառնություններն ու աշխատանքները, որը կատարում է փոխադրիչ մեքենան (օրինակ՝ վերամբարձ կռունկ, հոսքային գիծ, շարժասանդուղք և այլն):*
- *Օրինակների միջոցով կարողանա նշել հոսքային գծի աշխատանքը, առանձնացնի սննդամթերքի և այլ արտադրական գործարանի հոսքային գծերի աշխատանքի առավելությունները (օրինակ՝ հոսքային գծով հաջորդաբար մատուցվող սննդամթերքի բաղադրիչները )*
- *Կարողանա առանձնացնել ,այն ծանր ֆիզիկական աշխատանքը, որը կատարում էր մարդը մինչ հոսքային գծի ստեղծումը:*

- Օրինակների միջոցով կարողանա նշել շարժասանդուղքի աշխատանքի օգտակարությունը (օրինակ մետրոպոլիտեններում, կայարանատներում, առևտրի խոշոր կենտրոններում):
- Կարողանան օգտնել անվտանգ և պահպանել անվտանգության կանոնները:
- Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:

Տեխնոլոգիական մեքենաներ: Փայտամշակման, գայլիկոնային, խառատային հաստոցներ:

[Թեմատիկ պլան](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ինչպե՞ս են կառուցված տեխնոլոգիական մեքենաները:*
- *Ի՞նչ աշխատանք է կատարում տեխնոլոգիական մեքենան:*
- *Ինչպիսի՞ փոփոխություն են կրել տեխնոլոգիական մեքենաները ժամանակի ընթացքում:*
- 

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- *Իմանա որ բանող մեքենաները լինում են նաև տեխնոլոգիական, որոնք կառուցված են մի քանի հանգույցներից:*
- *Տեխնոլոգիական մեքենաները հեշտացնում են կենցաղը, մարդու ֆիզիկական աշխատանքն ու խնայում են ժամանակը:*
- *Ժամանակի ընթացքում տեխնոլոգիաների կատարելագործման և զարգացման պատմությունը:*
- *Իմանա սանիտարահիգիենիկ պահանջների և աշխատանքի անվտանգության կանոնների մասին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Կարողանա առանձնացնել որոնք են տեխնոլոգիական մեքենաները (մետաղահատ հաստոցներ, ջուլիակահաստոցներ, փաթեթավորման մեքենաներ, պոլիգրաֆիական մեքենաներ, խառատային և գայլիկոնիչ հաստոցներ,)*
- *Կենցաղից բերել օրինակներ տեխնոլոգիական մեքենաների աշխատանքների և էներգիայի փոխակերպման վերաբերյալ (էլեկտրական էներգիան մեխանիկականի, արագ շարժումը՝ դանդաղի կամ հակառակը):*
- *Օրինակներով ներկայացնել տեխնոլոգիաների զարգացումը ժամանակի ընթացքում և կենցաղից բերել օրինակներ (օրինակ՝ ձեռքի կարի մեքենա, ոտքի կարի մեքենա, կիսաավտոմատ կարի մեքենա, ավտոմատ կարի մեքենա):*
- *Տեխնոլոգիական մեքենաներում նյութը մշակվող առարկան է, որը կարող է գտնվել պինդ, հեղուկ կամ գազանման վիճակում: Այդ մեքենաներում նյութի փոխակերպումը՝ դրա ձևի, հատկությունների, վիճակի և դիրքի փոփոխությունն է:*

- Աշխատելիս պահպանել սանիտարահիգիենիկ պահանջներ և աշխատանքի անվտանգության կանոնները :
- Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ինչպե՞ս արագ հավաքել մեկից ավելի մոդել :*
- *Որտե՞ղ է ճիշտ հավաքել մոդելները:*
- *Ինչպե՞ս է ճիշտ աշխատել:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- *Իմանան և տիրապետեն համագործակցելու հմտությունների:*
- *Ավելի լավ է հավաքել հարթ եւ հարթ մակերեսով տեղերում:*
- *Տարբեր տարրերի համար նախատեսված մասերը որոնք են:*
- *Անվտանգ աշխատելու կանոնների մասին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Համագործակցել և աշխատել խմբերով:*
- *Կոնստրուկտորը հավաքել հարթ եւ հարթ մակերեսով հատակին կամ սեղանին:*
- *Աշխատելիս ջխառնել տարբեր տարրերի համար օգտագործվող մասերը:*
- *Աշխատելիս պահպանել սանիտարահիգիենիկ պահանջներ և աշխատանքի անվտանգության կանոնները:*
- *Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:*



**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ի՞նչ է կոնստրուկտորը:*
- *Ինչպիսի՞ օ կոնստրուկտորով էք աշխատում:*
- *Ինչպիսի՞ օ հնարավորություն է տալիս կոնստրուկտորով աշխատանքը:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- *Կոնստրուկտորը ստանդարտ դետալների հավաքածու է, որոնցից կարելի է հավաքել տարբեր մոդելներ:*
- *Իմանան, որ Լեզոն, Փազը և այլ խաղալիքներ կոնստրուկտորներ են:*
- *Կոնստրուկտորով աշխատելու հնարավորությունների և առավելությունների մասին:*
- *Պլանավորել կատարվելիք աշխատանքները:*
- *Կոնստրուկտորների տեսակների և դետալների միացման մասին:*
- *Իմանա սանիտարահիգիենիկ պահանջների և աշխատանքի անվտանգության կանոնների մասին:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքը կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- *Կոնստրուկտորները օգտագործվել մանկական խաղալիքներ հավաքելու, ինչպես նաև կարողանան օգտագործել ժամանակավոր մեխանիզմների կառուցման համար :*
- *Նշել, որ կոնստրուկտորով աշխատանքը հնարավորություն է տալիս մշակելու, կառուցելու, փորձարկելու և բարելավելու իրենց իսկ ստեղծած լուծումները:*
- *Կարողանան կոնստրուկտորով իրականացնել այն աշխատանքները, որոնք նախագծել են:*
- *Որոշել հավաքման հաջորդականությունը:*
- *Իրականացնել ըստ նմուշի կամ տեխնիկական նկարի մոդելի հավաքումը խմբով:*
- *Իրագործել փոխադարձ հսկողությունը հավաքման աշխատանքների ժամանակ:*

- Աշխատելիս պահպանել սանիտարահիգիենիկ պահանջներ և աշխատանքի անվտանգության կանոնները :
- Կարողանա նշել թեմայում առկա միջառարկայական կապերը:

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

- *Ինչպե՞ս որոշել մակետների տարբերությունը:*
- *Ի՞նչ գործողություն կատարել, որպեսզի կարողանաք մեկնաբանել համեմատաբար բարդ մակետների և մոդելների կառուցվածք:*
- *Ինչպե՞ս կազմել մոդելի կամ մակետի հավաքման երթուղային քարտը:*

